

## Հրանտ Մաթևոսյան -80

Մարտի 3-ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում նշվեց գրող, արձակագիր Հրանտ Մաթևոսյանի ծննդյան 80- ամյակը: Միջոցառմանը մասնակցում էին Հրանտ Մաթևոսյանի անվան հիմնական դպրոցի սաները: Նրանք թատերականացված ձևով ներկայացրին գրողի կյանքը, գրական ժառանգությունը:

Գրողի մտերիմներից հաղես եկավ գեղանկարիչ Հրանտ Թադևոսյանը: Դեպքեր, դրվագներ ներկայացնելուց հետո նկարիչը իր խոսքը եզրափակեց այսպես «եկավ, տեսավ, թողեց, գնաց»: Կինոռեժիսոր Ջուլիետա Կաժոյանը անդրադարձավ Հրանտ Մաթևոսյանի սցենարներով նկարահանված ֆիլմերին, դրվագներ պատմեց «Աշնան արևը» ֆիլմի նկարահանումներից: Այնուհետև ելույթներ ունեցան պատմաբան Գևորգ Մելքոնյանը, բանաստեղծ Արմեն Շեկոյանը, արձակագիր Վանուշ Շերմազանյանը: Անվանի գրողի ստեղծագործություններից հատվածներ կարդացին ասմունքող դերասան Սերգուշ Բաբայանը և դերասանուհի Մայրանուշ Գրիգորյանը: Միջոցառմանը ներկա էր նաև Հրանտ Մաթևոսյանի ընտանիքը: Շնորհակալական խոսքով հանդես եկավ գրողի որդին՝ Դավիթ Մաթևոսյանը:

Գրողի կինը Վերժինե Մաթևոսյանը Ազգային գրադարանին նվիրեց «Աստված, էս ինչ սիրուն աշխարհ է» խորագրով վիպակների ժողովածուն՝ բուլղարերեն թարգմանությամբ: Միջոցառման ավարտից հետո հյուրերը ծանոթացան թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահում ներկայացված գրականության ցուցադրությանը, որտեղ տեղ էին գտել գրողի տարբեր տարիների ստեղծագործությունները, հողվածները, թարգմանությունները տարբեր լեզուներով: